Արևադաշտ համայնքի ղեկավարի հաշվետվությունը համայնքի բնակչության առջև 2011թ-ի 1-ին կիսամյակում կատարված աշխատանքների վերաբերյալ:

Հարգելի համագյուղացիներ, հյուրեր, այսօր մենք հավաքվել ենք մարզպետ պարոն Ա. Ղահրամանյանի կարգադրությամբ լսելու համայնքի ղեկավարի, ավագանու, համայնքի ղեկավարի աշխատակազմի 1-ին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

Համայնքի խնդիրները լուծելու նպատակով, համայնքներում օրենքով սահմանված կարգով ընտրվում են տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ղեկավար, ավագանի:

Լսելով քննարկելով բնակիչներին հուզող բոլորն խնդիրները, միջոցներ ենք կիրառում դրանք լուծել ի օգուտ մեր բնակչությանը:

Զինկոմիսարիատի հետ կատարվել են կցագրման աշխատանքներ:

Զինակոչիկների ընտանիքների հետ կատարվել են հատուկ բացատրական աշխատանքներ:

Նոր թաղամասի մուտքի գլխավոր գազատար խողովակների աշխատանքները ավարտված են, սակայն ընդունման և հանձնման գործընդացը չի կատարվել նրանց աշխատանքային թերությունների պատճառով:

«Հայկ Մշեցի» ՍՊԸ-ի կազմակերպության հետ կնքել ենք պայմանագիր գազաֆիկացումը ավարտին հասցնելու և գազի անսարքությունը վերացնելու համար, որի համար իրենց հաշվեհամարին փոխանցվել է 17,661,0 մլն դրամ, սակայն մինչև օրս ձգձգվում է աշխատանքները և շահագործման չի հանձնվել:

Աշխատանքների ավարտի պայմանագրով ժամկետ է սահմանված եղել մինչև 30.07.2010 թվական:

Խմելաջրի նոր գիծ է անցկացվում դեպի Արևադաշտ Ասիական բանկի ֆինանսավորման շնորհիվ: Այս ծրագրի շնորհիվ շուտով մեր բնակիչները կունենան ամենօրյա խմելու ջուր՝ հաշվիչների առկայությամբ:

Ազգաբնակչության մի մասը արդեն մի քանի տարի է ինչ ոռոգման ջուր ունի, իսկ մյուս մասն էլ չուներ, այսօր մյուս մասի ոռոգման ջրագիծը պատրաստ է, սակայն Արմավիր ՋՕԸ դեռ պայմանագիր չի կնքել ինչ –ինչ պատճառներով:Շուտով բոլորն էլ ապահոված կլինեն ոռոգման ջրով:

Համայնքի որոշ աշխատանքներ դանդաղ են իրականանում, դա այն պարզ պատճառով է, որ մեր համայնքի բնակիչները, ովքեր ունեն սեփականաշնորհված և միաժամանակ վարձակալական հիմունքներով վերցված հողատարածքներ, չեն ցանկանում ժամանակին կատարել վճարումներ: Այս ուղղությամբ կատարել ենք քայլեր, որ այսուհետև կկատարվեն բավարար քանակությամբ գանձումներ:

Կատարվել են կազմակերպչական աշխատանքներ, որի շնորհիվ գյուղապետարանի աշխատողները չունեն հողի հարկի պարտքեր: Առաջին կիսամյակի կտրվածքով հողի հարկի գումարը կազմում է՝ 56,6%, իսկ գույքահարկի գումարը կազմում է՝ 157,8%, տեղական տուրքերի գումարը կազմում է՝ 19,2% վարձակալական հողերի գումարը կազմում է՝ 8,0 %:

ՄՌՕ-ի հետ համատեղ աշխատանքի շնորհիվ գանձումների տոկոսը կբարձրանա:

Համայնքը ունի մի շարք խնդիրներ, որոնց նկատմամբ լուրջ ուշադրություն ենք դարձնում և հնարավորինս չափ պետք է արագացնել և միահամուռ ուժերով իրականացնել, թե ճանապարհաշինության մեջ, թե դպրոցի շենք ունենալու և մի շարք ուրիշ հիմնահարցեր իրականացնելու գործում:

Աշխատակազմի քարտուղարի կողմից բնակչությանը տրվել են տեղեկանքներ, քաղվածքներ, կատարվել են դիմումների քննարկումներ:

Համայնքի ղեկավար Հ. Օհանյան

Արևադաշտ համայնքի եկամուտների կատարողականը

առ 10.01. 2011թ. մինչև 30.06.2011թ.

- հողի հարկ 2283,7 դրամ
- գույքահարկ 181,5 դրամ
- վարձակալական հողերի վարձավճար 79,6դրամ
- դոտացիա 764,6 դրամ
- տեղական տուրքեր 4,8 դրամ
-

Ծախսերի կատարողական

- գյուղապետարանի աշխատավարձ 2535,1 դրամ
- պարտադիր սոց վճար 692,4 դրամ
- տրանսպորտային սարքավորումներ 550,0 դրամ
- ԴԱՀԿ-ի որոշմամբ աշխատավարձ 712,0 դրամ
- Սոց Օգնություն 20,0 դրամ

Քարտուղարություն

10. Հունվարի 2011թ.-ից մինչև 30. հունիս 2011թ

Կայացել է ավագանու նիստ	Քաղաքացիներից ստացված և քննարկված դիմումների թիվը	Մուտք արված գրությունների թիվը	Ելք արված գրությունների թիվը	Տրված տեղեկանքների թիվը
3	13	40	43	151